ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2023 թվականի №----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի №150-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 20-ի «Էլեկտրական էներգիայի փոխհոսքերի (ինքնավար էներգաարտադրող-երաշխավորված մատակարար) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի №273-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №150-Ն որոշման հավելվածի՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի (Ինքնավար էներգաարտադրող–Երաշխավորված մատակարար) պայմանագրի օրինակելի ձևի՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Ինքնավար էներգաարտադրողի տեղակայանքների (ինքնավար խմբի դեպքում՝ խմբի էներգաարտադրող հանդիսացող մասնակիցների տեղակայանքների գումարային) դրվածքային հզորությունը կազմում է _____ կՎտ:».

2) 5-րդ կետում «չափով» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը» բառերը.

3) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. ԻԷԱ-ի կողմից՝ Պայմանագրում էլեկտրական էներգիայի արտադրության կամ սպառման նոր կետ ավելացնելու կամ Պայմանագրից արտադրության կամ սպառման կետ հանելու դեպքերում Երաշխավորված մատակարարը, Պայմանագրում փոփոխություններն ուժի մեջ մտնելու Հաշվարկային ամսվանից սկսած, ԻԷԱ-ին ներկայացվող՝ Պայմանագրի №1 հավելվածում արտացոլում է համապատասխան փոփոխությունները: ԻԷԱ-ի կողմից ինքնավար խումբ ստեղծելու դեպքում Երաշխավորված մատակարարը, Պայմանագրում փոփոխություններն ուժի մեջ մտնելու Հաշվարկային ամսվանից սկսած, խումբը ստեղծող ԻԷԱ-ին ներկայացնում է Պայմանագրի №2 հավելվածը: Ինքնավար խմբում նոր մասնակից ընդգրկվելու կամ խմբից մասնակից հանվելու դեպքերում Երաշխավորված մատակարարը, Պայմանագրում փոփոխությունները կամ ԷՄԱ կանոնների համաձայն՝ Ինքնավար խմբից մասնակցի հանված համարվելն ուժի մեջ մտնելու Հաշվարկային ամսվանից սկսած, խումբը ստեղծող ԻԷԱ-ին ներկայացվող՝ Պայմանագրի №2 հավելվածում արտացոլում է համապատասխան փոփոխությունները:».

4) 14-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «բաշխման ծառայության դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ ԷՄԱ կանոնների համաձայն՝ բաշխման ծառայության վճար չի գանձվում» բառերը.

բ. 3-րդ ենթակետի «գ» պարբերությունում «միկրոէներգաարտադրողի» բառը փոխարինել «ՄԷԱ կայանի կամ Որակավորված սպառողի» բառերով.

5) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Պայմանագրի անբաժանելի մաս են կազմում՝

1) ԻԷԱ-ին հատուցման (վճարման) ենթակա և բաշխված (հաշվանցված) էլեկտրական էներգիայի քանակությունների վերաբերյալ ակտի մասին №1 հավելվածը,

2) Ինքնավար խումբը ստեղծող ԻԷԱ-ին հատուցման (վճարման) ենթակա և բաշխված (հաշվանցված) էլեկտրական էներգիայի քանակությունների վերաբերյալ ակտի մասին №2 հավելվածը:».

6) 9-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« **9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Ինքնավար էներգաարտադրող՝	**Երաշխավորված մատակարար՝**
Բնակության (գտնվելու) վայրը	Գտնվելու վայրը
Բանկային հաշվեհամար	Բանկային հաշվեհամար
Հարկ վճարողի հաշվառման համար (իրավաբանական անձի դեպքում)	Հարկ վճարողի հաշվառման համար
Հեռախոսահամար	Հեռախոսահամար
Էլեկտրոնային փոստ	Էլեկտրոնային փոստ
Պաշտոն (իրավաբանական անձի դեպքում)	Պաշտոն
_____	_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)	(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ. (առկայության դեպքում)	Կ.Տ. (առկայության դեպքում) ».

7) 1-ին և 2-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2023թ.